ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 35-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 03.08.2019Թ. ԹԻՎ 20-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներով .

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում օգտագործվող պետական կնիքների ձևը, պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների նկարագրերը, դրանց պատվիրման, հատկացման, պահպանման, ոչնչացման կարգը և հաշվառման մատյանի ձևը հաստատելու մասին» թիվ 20-Լ հրամանի հավելված 1-ի 16-րդ կետում «ՀՀ ոստիկանության պետի 07.11.2012թ. թիվ 4500-Ա»

բառերը փոխարինել «ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 24.02.2020թ. թիվ 10-Լ» բառերով:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին, քաղաքացիական ծառայողներին և քաղաքացիական աշխատանք կատարողներին:

ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՂԱԶԱՐՅԱՆ**

«14» 09 2020թ.

ք.Երևան